

## 4.1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### *4.1.1. Ազգային հաշիվների համակարգ*

Հայաստանում ազգային հաշիվների կազմման աշխատանքները խարսխվել են Արժույթի միջազգային հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Եվրոպական համագործակցության հանձնաժողովի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից համատեղ մշակված և որպես միջազգային ստանդարտ ընդունված՝ «Ազգային հաշիվների համակարգ - 93»-ի մեթոդաբանության վրա, զուգահեռաբար շարունակելով Եվրոպական Միության երկրներում կիրառվող՝ «Եվրոպական հաշիվների համակարգ-95»-ի մեթոդաբանության ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Ազգային հաշիվների համակարգի առումով իրականացված աշխատանքներն ուղղորդված են եղել Եռամյա ծրագրով նախանշված՝ տնտեսության, ինչպես նաև կառուցվածքային հատվածների (այդ թվում՝ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ու ենթահատվածների՝ արտադրական եղանակով հաշվարկված ավելացված արժեքների տարեկան ծավալների) մակարդակով հաշիվների կազմման, համախառն ներքին արդյունքի, ազգային հարստության բաղադրիչների և այլ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկների և մեթոդաբանության (այդ թվում՝ չդիտարկվող տնտեսության բաղադրիչների) կատարելագործման, ինչպես նաև տեղեկատվական բազայի ընդլայնման միջոցառումների իրագործման ապահովմանը: Շարունակվել են նաև բնակչության դրամական եկամուտների և ծախսերի վիճակագրության վարման, դրանց մեթոդաբանության կատարելագործման և հաշվեկշիռների կազմման աշխատանքները:

Ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարման և կատարելագործման նպատակով, վերջին տասնամյակում առաջին անգամ, վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների և պետական հիմնարկների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, տնտեսության ճյուղերի համար կազմվել է հիմնական միջոցների 2005 թվականի հաշվեկշիռը՝ հաշվեկշռային և մնացորդային արժեքներով:

Միասնական դասակարգչային գործիքի ներդրման ու կիրառման, ինչպես նաև Եվրոպական հաշիվների համակարգ 95-ով երաշխավորվող մեթոդաբանությանն անցման ապահովման ու դրա նախադրյալների ձևավորման նպատակով, Հայաստանի ազգային հաշիվներում անցում է կատարվել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ու դրանց խմբավորումների ձևաչափերի ներդրմանը՝ նախկինում կիրառվող Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի փոխարեն: Այդ համատեքստում, արտադրական եղանակով հաշվարկված Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը, Ժողովրդական տնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչով տրվող գործունեության տեսակներից զատ, սկսած 2006թ. հունվար ամսից, եռամսյակային պարբերականությամբ, ներկայացվել է նաև Եվրոպական հաշիվների համակարգ-95 ձեռնարկով տրվող և Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին խարսխված՝ Ա3, Ա6 և Ա17 խմբավորումների ձևաչափերով (2004թ. տարեկան և 2005թ. եռամսյակային ցուցանիշները

ներկայացված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկատվական զեկույցում և այնուհետև յուրաքանչյուր եռամսյակ): Հաշվի առնելով անցման գործընթացի արդյունքում ձևավորված դինամիկ շարքերի առկայության հանգամանքը, սկսած 2007թ. հունվարից ազգային հաշիվների հիմնական ցուցանիշներն, այդ թվում՝ Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը, նախատեսվում է հրապարակել միայն ըստ Եվրոպական հաշիվների համակարգ-95 ձեռնարկով տրվող խմբավորումների ձևաչափերի. Ա3 և Ա6՝ ամսական պարբերականությամբ, իսկ Ա17՝ եռամսյակային պարբերականությամբ:

2006թ. ընթացքում, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների զարգացման համար հոլանդական դրամաշնորհի շրջանակում միջազգային փորձագետի հետ համատեղ աշխատանքի, ինչպես նաև Հունաստանի վիճակագրական ծառայություն կատարած աշխատանքային այցելության ընթացքում կազմակերպված քննարկումների արդյունքներով հստակեցվել են «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման, «Ծախսեր-թողարկում» աղյուսակների կազմման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրները: Դյուրային վիճակագրությունում առկա տեղեկատվական բազայի հիման վրա կազմվել են արտադրության և միջանկյալ սպառման փորձնական աղյուսակներն, ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի համապատասխանաբար 2-նիշ և 4-նիշ դասակարգման: Նույն համատեքստում, «Ծախսեր - թողարկում» աղյուսակների ձևաչափերի մշակման, ինչպես նաև ազգային հաշիվների ցուցանիշների փոխհամաձայնեցվածության ապահովման նպատակով 2006թ. ընթացքում աշխատանքներ են իրականացվել ոչ ֆինանսական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միանվագ հետազոտության նախապատրաստման և իրականացման ուղղությամբ: Ազգային հաշիվների մշակման և «Ծախսեր-Թողարկում» աղյուսակների ձևաչափերի ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով սկսվել են տվյալների բազաների ձևավորման և համապատասխան համակարգչային ծրագրերի կազմման աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի հրապարակվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների բաղադրիչների եռամսյակային և տարեկան ցուցանիշները ներկայացնող վիճակագրական ժողովածուները՝ հայերեն և ռուսերեն (2006թ. արդյունքներով՝ նաև հայերեն և անգլերեն):

#### *4.1.2. Արդյունաբերություն*

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրման նպատակով շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված, ինչպես նաև նոր ընդգրկվող արդյունաբերական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման ու վերածածկագրման աշխատանքները:

Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման նպատակով, 2005թ. սկսվել և 2006թ. հիմնականում ավարտվել են արտադրատեսակների ծածկագրման աշխատանքները, որոնք ուղղորդված են եղել ինչպես

արտադրատեսակների անվանումների ու դրանց չափի միավորների՝ նոր դասակարգչին համապատասխանեցմանը, այնպես և հաշվառվող արտադրատեսակների վերածածկագրմանը:

Արդյունաբերությունը բնութագրող ցուցանիշների ամբողջականության և հաշվարկների կատարելագործման նկատառումներով պայմանավորված, որոշ արտադրատեսակների (հաց, պանիր) «շղիտարկվող» (ուղղակի վիճակագրական գործիքների կիրառման տեսանկյունով՝ հաշվարկների որոշակի խնդիրներ առաջացնող) դաշտի գնահատման նպատակով մշակվել և ներդրվել է համապատասխան մեթոդաբանություն, ըստ այդմ, տարանջատելով համապատասխան տեղեկատվական աղբյուրները՝ տնային տնտեսությունների հետազոտություններ և կազմակերպությունների ընտրանքային հետազոտություններ:

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի՝ «Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում» բաժնին համապատասխանող ցուցանիշների ամբողջականության ապահովման նկատառումով պայմանավորված, համատեղ աշխատանքներ են իրականացվել համապատասխան ոլորտի վարչական վիճակագրություն իրականացնող՝ «ՀայՌ-ուսգազարդ» ՓԲԸ, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ և «Երևան ջուր» ՓԲԸ հետ՝ գազի և ջրի արտադրության ու բաշխման ծավալների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության առկայության ապահովման նպատակով:

Վիճակագրական գործիքակազմի արդիականացման և կիրառվող դասակարգիչներին համապատասխանեցման նպատակով 2004թ. ընթացքում վերանայվել են գործող պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները, կատարելագործվել են տեղեկատվության հավաքագրման, մշակման և ներկայացման մեթոդներն ու ձևերը, այդ թվում՝ ցուցանիշների հաշվարկման համար հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական ցանցերի և համակարգչային ծրագրերի լայն կիրառմամբ: Նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն է ընձեռել զգալիորեն նվազեցնել համապատասխան վիճակագրական աշխատանքների կատարման (մշակման) ժամկետները:

2004թ. հրատարակվել է «Արդյունաբերություն» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է արդյունաբերական արտադրանքի ծավալի (ըստ գործունեության տեսակների), արդյունաբերական արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրության, արտադրական հզորությունների, նյութատեխնիկական բազայի և արդյունաբերության գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշների դինամիկան 1998-2003թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

#### *4.1.3. Գյուղատնտեսություն*

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ամբողջական ու համապարփակ ներդրման նպատակով 2004թ. ընթացքում գործողության մեջ են դրվել անտառային տնտեսությանը և ձկնորսությանն ու ձկնաբուծությանը վերաբերող պետական վիճակագրական հաշվետվությունների երկու նոր ձևեր, ինչպես նաև վերանայվել և փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսության

վիճակագրությանն առնչվող համապատասխան վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները:

Շարունակվել են գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի արդիականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, հաշվի առնելով բուսաբուծական և անասնապահական մթերքի արտադրության ծավալների ճշգրտման մեխանիզմների ու մեթոդաբանությունների շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը:

2004թ. իրականացվել է հանրապետությունում առկա բազմամյա տնկարկների համատարած հաշվառումն, որի արդյունքների հիման վրա պատրաստվել և հրատարակվել է համապատասխան վիճակագրական տեղեկագիր:

Եվրամիության վիճակագրական ծառայության ՏԱՄԻՄ ծրագրի «Վիճակագրություն-6» պայմանագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2004թ. իրականացվել է «Գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտություն», որի նպատակն էր տեղեկատվություն ստանալ հետազոտվող տնտեսությունների կողմից տնօրինվող գյուղատնտեսական առանձին հողատեսքերի մակերեսների, բազմամյա տնկարկների տարածությունների, տեսակների և բաշխման խտության, անասնապահության, գյուղատնտեսական առանձին կենդանիների մթերատվության, գյուղատնտեսական մթերքի իրացման, գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընթացիկ ծախսերի և գյուղատնտեսության վիճակագրությանն առնչվող ծավալային և բնեղեն այլ ցուցանիշների վերաբերյալ և ըստ այդմ` ընդլայնել գյուղատնտեսության վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը:

2006թ. հրատարակվել է «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, դրանցից ստացված բերքի, անասնազխաքանակի, անասնապահական մթերքի արտադրության, գյուղատնտեսական մթերքի իրացման, ապրանքայնության, ձկնորսության, ձկնաբուծության և գյուղատնտեսական գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշների դինամիկան` 2000-2005թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

#### *4.1.4. Շինարարություն*

Շինարարության վիճակագրությունում Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ամբողջական ներդրման նպատակով 2004-2005թթ. ընթացքում ամբողջությամբ վերանայվել են շինարարության վիճակագրության վարմանն առնչվող պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները:

Վիճակագրական տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով մշակվել և ներդրվել են համապատասխան համակարգչային ծրագրեր, ինչը հնարավորություն է ընձեռել նվազեցնել համապատասխան ցուցանիշների մշակման և ամփոփման ժամկետները:

Վիճակագրական ցուցանիշների արժանահավատության բարձրացման, համընդգրկունության ապահովման ու հաշվարկային մեթոդաբանությունների

կատարելագործման և որպես դրա հետևանք ու նախապայման՝ բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների ամբողջական բացահայտման ու արտացոլման նկատառումներով պայմանավորված՝ շարունակվել են անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկումները (շրջագայությունների միջոցով)՝ ձևավորելով ու պարբերաբար արդիականացնելով այդ շինարարական օբյեկտների համացանկը:

2006թ. հրատարակվել է «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հիմնական միջոցների գործարկման, շինարարության, շինմոնտաժային աշխատանքների ծավալների և բնակելի շենքերի, սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների գործարկման (ըստ տնտեսական գործունեության տեսակների ու ֆինանսավորման աղբյուրների), և այլ ցուցանիշների դինամիկան 2001-2005թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

#### *4.1.5. Տրանսպորտ և կապ*

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների, հասկացությունների և գործունեության տեսակների ամբողջական ու համապարփակ ներդրման, ինչպես նաև Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով, ամբողջությամբ վերանայվել են տրանսպորտի և կապի վիճակագրության վարմանն առնչվող պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները:

Տրանսպորտի և կապի վերաբերյալ համապատասխան վիճակագրական տեղեկատվության ապահովման նպատակով, շարունակվել են համապատասխան ոլորտների վարչական վիճակագրություն իրականացնող պետական լիազոր մարմինների հետ համատեղ աշխատանքները:

Վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման, ցուցանիշների կրկնորոշությունների բացառման և տեղեկատվական հոսքերի կանոնակազման նպատակով, 2006թ. ընթացքում տրանսպորտի վիճակագրությանն առնչվող պետական վիճակագրական երկու հաշվետվությունների ձևեր միավորվել են մեկ՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևում:

Եվրամիության վիճակագրական ծառայության ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-8» պայմանագրի «Տրանսպորտի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2006թ. անց է կացվել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ներքաղաքային ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև այդ կազմակերպություններին պատկանող և համապատասխան երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների (միկրոավտոբուս և ավտոբուս) ընտրանքային հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել և ընդլայնել ավտոմոբիլային տրանսպորտի վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը: Հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռել ուսումնասիրել ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության մարզային

կառուցվածքն ու ծավալները, դրանց առանձնահատկությունները, համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում ներքաղաքային ավտոտրանսպորտի գործունեության վերաբերյալ առկա տեղեկատվական բազան նոր ցուցանիշներով (մասնավորապես՝ շրջապտույտի երկարության և շրջապտույտի տևողության հարաբերակցությունը, շրջապտույտի տևողության և շարժման միջին միջակայքի հարաբերակցությունը և այլն), ստանալ ներքաղաքային ավտոտրանսպորտի վերաբերյալ ցուցանիշների վիճակագրական լրահաշվարկների համար անհրաժեշտ և կիրառելի գործակիցներ և որպես վերը նշվածի հետևանք՝ բարձրացնել տեղեկատվության ամբողջականությունն ու որակը:

2004թ. հրատարակվել է «Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և տրանսպորտի այլ տեսակների, տրանսպորտային ենթակառուցվածքների, տրանսպորտային ծառայությունների հասույթների և ծախսերի, հիմնական միջոցների, ճանապարհատրանսպորտային պատահարների, կապի համակարգի և այլ ցուցանիշների դինամիկան 1999-2003թթ. ժամանակահատվածի կտրվածքով:

#### *4.1.6. Առևտուր և այլ ծառայություններ*

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրման նպատակով, վերանայվել են առևտրի և ծառայությունների վիճակագրության վարման երկու առանցքային պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները, ինչպես նաև շարունակվել վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների համախմբի արդիականացման ու վերջիններիս կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման ու վերածածկագրման աշխատանքները: Որպես նշվածի հետևանք, մշակվել և ներդրվել են նաև ցուցանիշների մշակման և ամփոփման համար անհրաժեշտ համակարգչային նոր ծրագրեր:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, որպես Հայաստանի Հանրապետության տնտեսության գերակա ճյուղի, ամբողջական վիճակագրական հաշվառման ու արտացոլման անհրաժեշտությունը, 2005թ. մշակվել և գործողության մեջ է դրվել «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևը:

Մանրաձախ ապրանքաշրջանառության ամբողջականության ապահովման և արժանահավատության բարձրացման նկատառումներով պայմանավորված շարունակվել են հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներում իրացվող ապրանքների (ըստ պարենային և ոչ պարենային տարատեսակների), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի օրական ապրանքաշրջանառության ծավալի ընտրանքային դիտարկումները: Ստացված արդյունքներն այնուհետ կիրառվել են առևտրի վիճակագրության գործիքակազմի ու մեթոդաբանության կատարելագործման համար:

#### 4.1.7. Գներ և սակագներ

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2004-2005թթ. (2004թ. ապրիլի 1-ից 2005թ. մարտի 31-ը) տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքներով արձանագրված սպառողական զամբյուղի բաղադրատարրերի էական փոփոխություններն ու 2005թ. օրացուցային տարվա գնային փոփոխությունները, վերահաշվարկվել են սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռները: 2006թ. հունվարից սկսած, սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար բազիսային տարի է ընդունվել 2005թ. (2002թ. փոխարեն): 2006թ.-ից վերանայվել ու համալրվել է դիտարկման «զամբյուղը» ներկայացնող ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների կազմն ու կառուցվածքը: Սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառվել է 70 ապրանք-ծառայություն (91 ապրանք-ծառայություն ներկայացուցիչ): Ըստ այդմ, կատարվել են նաև ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի՝ չափման միավորի, մակնիշի և այլ չափանիշների փոփոխություններն ու ճշգրտումներ: 2006թ. հունվարից սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար դիտարկվող ապրանք-ծառայությունների քանակը կազմել է 470 (560 ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչ), նախորդ՝ 400-ի փոխարեն: 2004թ. փետրվարից, կազմակերպվել են սպառողական գների դիտարկման աշխատանքները Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) և սկսած 2006թ. հունվարից՝ մարզի ցուցանիշները ներառվել են Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսների հաշվարկներում: Ընդհանուր առմամբ, սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար, 2006թ. հունվարից սկսած, յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 240000 միավոր գնային տվյալ՝ նախորդ 140000-ի փոխարեն: Սպառողական գների և գների ինդեքսների վերաբերյալ տվյալներն ամփոփվել են ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներով:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների ու հասկացությունների ներդրման նպատակով, 2004 թվականին վերանայվել և ճշգրտվել է արդյունաբերական արտադրանքի գների դիտարկման դաշտում ընդգրկված արդյունաբերական կազմակերպությունների և դիտարկվող արտադրատեսակների ցանկը, մշակվել և ներդրվել է «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի գների հաշվառման մասին» պետական վիճակագրական հաշվետվության նոր ձևն ու դրա լրացման հրահանգը, մշակվել են գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական խնդիրները, կատարվել է մինչև 2000 անվանում արտադրատեսակների կողավորում՝ Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների դասակարգչի մինչև 11-րդ նիշ մանրամասնեցմամբ: Իրականացվել են գների ինդեքսների փորձնական հաշվարկներ՝ նոր ընտրանքի հիման վրա:

Գյուղատնտեսական մթերքի իրացման ու արտադրության միջոցների գնման գների, ծավալների մասին գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտության միջոցով հավաքագրվող տեղեկատվության արժանահավատությունն ու ներկայացուցչականությունն առավել ապահովելու նպատակով ընդլայնվել է գյուղատնտեսության ոլորտում գների դիտարկման դաշտը՝ 200 գյուղական համայնքներում հետազոտվող գյուղացիական տնտեսությունների քանակը 6000-ից հասցնելով 7600-ի (յուրաքանչյուր գյուղական համայնքում՝ 30 գյուղացիական տնտեսությունների փոխարեն դիտարկելով 38-ը): Սույն աշխատանքի կատարման առումով հարկ է նշել, որ վերջինս իրականացվել է հիմնականում ներքին ռեսուրսների հաշվին: Ստացված տվյալներն օգտագործվել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման (ըստ հանրապետության, իրացման 3 ուղղությունների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի), ինչպես նաև գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների) գների ինդեքսների ամսական հաշվարկների իրականացման նպատակներով:

Յուրաքանչյուր եռամսյակ հաշվարկվել և հրապարակվել են արտաքին առևտրի (ներմուծման, արտահանման) գների ինդեքսներն ըստ՝ հետևյալ երեք հայտանիշների. ըստ բոլոր երկրների, Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների և այլ երկրների:

Համաձայն Ծառայության, Անկախ պետությունների համագործակցության Միջպետական վիճակագրական կոմիտեի, Ռուսաստանի Դաշնության Վիճակագրության դաշնային ծառայության միջև Անկախ պետությունների համագործակցության տարածաշրջանում Համախառն ներքին արդյունքի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին փոխըմբռնման հուշագրի՝ 2004-2005թթ. տվյալների հիման վրա իրականացվել է մոտ 1400 անվանում սպառողական ապրանք-ծառայությունների, ինչպես նաև մոտ 250 ներդրումային ապրանքների, մոտ 1000 շինարարական բաղադրամասերի, ոչ շուկայական ծառայությունների գնային ու քանակական տվյալների դիտարկման, հավաքագրման, ամփոփման աշխատանքները: Միջազգային համադրումների աշխատանքները հիմնականում իրականացվել են 2004-2006թթ.-ին, իսկ վերջնական արդյունքներն ամփոփվելու են 2007-2008թթ.-ին:

Եվրամիության վիճակագրական ծառայության ՏԱՄԻՄ ծրագրի «Վիճակագրություն-8» պայմանագրի «Գների վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2006թ. կազմակերպվել և իրականացվել է շինարարական կազմակերպությունների, շինարարական նյութերի վաճառքով զբաղվող առևտրային կազմակերպությունների և բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային կազմակերպությունների ընտրանքային հետազոտություն՝ գների ինդեքսների փորձնական հաշվարկներ կատարելու և շինարարության գների ու բեռնափոխադրումների սակագների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունների կատարելագործման նպատակով: Կիրառվող մեթոդաբանության կատարելագործման նպատակով, վերանայվել և ճշգրտվել են նաև շինարարության գների ինդեքսների հաշվարկման համար անհրաժեշտ՝ հետազոտվող բազային կազմակերպությունների ու ուսումնասիրվող բաղադրամասերի կազմն ու կառուցվածքը, ծրագրային խնդիրները և այլն:



Հետազոտության արդյունքներով հրապարակվել է գեկույց՝ հայերեն և անգլերեն, ինչպես նաև ներդրվել պետական վիճակագրական հաշվետվության (դիտարկման) չորս նոր ձև:

Շինարարության գների ինդեքսների հաշվարկման նպատակով շարունակվել է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետ՝ շինարարության բաղադրատարրերի գների վերաբերյալ տեղեկատվության ապահովման համատեքստում:

Ազգային հաշիվներում որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ) և տարեկան կտրվածքներով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 2006թ. փետրվարի 16-ին կայացած՝ «Գ-նաճը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով խորհրդարանական լուսններին ներկայացնելու նպատակով պատրաստվել և հրապարակվել է համապատասխան մեթոդաբանական ձեռնարկ:

#### *4.1.8. Չբաղվածություն*

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների, Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջադրվող սահմանումների, հասկացությունների և դասակարգումների ներդրման, ինչպես նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցման նկատառումներով պայմանավորված վերանայվել են աշխատանքի վիճակագրության բոլոր վիճակագրական դիտարկման փաստաթղթերը և դրանց լրացման հրահանգները: Շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների համախմբի արդիականացման ու վերջիններիս կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման ու վերածածկագրման աշխատանքները: Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչին անցմանը պայմանավորված համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների հետ իրականացված համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորվել և արդիականացվել են վիճակագրական տեղեկություններ տրամադրողների էլեկտրոնային բազաները, բարձրացել է հավաքագրվող տվյալների ներկայացման օպերատիվությունն ու որակը: Որպես նշվածի հետևանք և նախապայման, հիմնովին նորացվել են ամսական, եռամսյակային տվյալների մուտքագրման, տրամաբանական ստուգման, ելքային աղյուսակների ստացման ալգորիթմները և համակարգչային ծրագրերը:

Շարունակվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունները, որոնք ներառել են տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունները (2005 և 2006թթ., իսկ 2004թ. համար զբաղվածության վերաբերյալ հարցաշարի առանցքային հարցերը ներառվել են տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթում) ու մասնավոր հատվածի մինչև 100 աշխատող ունեցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտությունները (տարեկան պարբերականությամբ):

Միջազգային համագործակցության շրջանակում, Աշխատանքի միջազգային կազմակերպության գրասենյակի «Միգրացիայի վիճակագրություն» ծրագրի ներքո 2006թ. սեպտեմբեր ամսին իրականացվել է միգրացիայի փորձնական ընտրանքային հետազոտություն՝ հանրապետության 11 մարզերի 36 քաղաքային և 31 գյուղական բնակավայրերում, ընդգրկելով 1500 տնային տնտեսություն (արդյունքները կամփոփվեն 2007թ.):

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ վերանայվել են «Բնակչության զբաղվածության մասին» վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը՝ «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանեցնելու, Ջրաղմունքների տեսակների դասակարգչի ներդրման նկատառումներից ելնելով:

Եվրամիության վիճակագրական ծառայության SUՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-6» պայմանագրի «Աշխատանքի շուկայի վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում 2004թ. իրականացվել է աշխատուժի, (այդ թվում՝ մանկական զբաղվածության) ընտրանքային հետազոտություն՝ հանրապետության 11 մարզերի՝ 50 քաղաքային և 100 գյուղական բնակավայրերում, ընդգրկելով 2539 տնային տնտեսություն: Հետազոտության նպատակն էր ստանալ ծավալուն վիճակագրական տեղեկատվություն հանրապետությունում առկա աշխատուժի և աշխատաշուկային առնչվող հիմնահարցերի վերաբերյալ (բնակչության սեռատարիքային, վերարտադրողական և մասնագիտական կազմը, զբաղվածության կառուցվածքը, ոլորտներն ու գործոնները, թերզբաղվածության, գործազրկության բնույթն ու պատճառները և այլն): Ի տարբերություն մինչ այդ անցկացված համանման հետազոտությունների, հետազոտությունն ընդգրկել է նաև տվյալներ մանկական զբաղվածության վերաբերյալ: Հետազոտության արդյունքներով հրապարակվել է նաև զեկույց՝ հայերեն և անգլերեն:

Աշխատանքի շուկայի վերաբերյալ հավաքագրվող բազմաբովանդակ տեղեկատվությունը հնարավորինս ամփոփվել է մարզային, գյուղ/քաղաք և գենդերային կտրվածքներով:

Հրատարակվել է «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների (ըստ՝ մարզերի, տնտեսության տարբեր ոլորտների և հատվածների, սեռատարիքային խմբերով և կրթական մակարդակով) դինամիկան՝ 2002-2005թթ. ժամանակահատվածի կտրվածքով: